Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝
https://grqaser.org/hy/donate

Ճապոնական գրականություն, Արձակ, Պատմվածք

16+

Թարգմանիչ՝ Կարինե Աշուղյան

Ակուտագավա Ռյունոսկե

Նանկինյան Քրիստոսը

Աշնանային միջօրե էր: Նանկինում, Ցիվանցեզե փողոցի տներից մեկում, արմունկները սեղանին հենած՝ չինացի գունատ աղջիկը նստած ձմերուկի կորիզ էր չրթում, որ վերցնում էր լաքապատ սկուտեղից:

Սեղանի վրա դրված լամպը տամուկ լույս էր արձակում, որը ոչ այնքան խավարն էր ցրում, որքան ընդգծում էր սենյակի խղճուկ տեսքը: Անկյունում, պատռված պաստառներով պատված պատի մոտ, վրան անփութորեն բրդե ծածկոց նետված շաքարեղեգե մահճակալի վերևում, փոշոտ առագաստ էր կախված: Սեղանի մյուս կողմում կարծես մոռացված, հին աթոռ էր: Ամենաուշադիր աչքն անգամ այդ իրերից բացի չէր կարող գտնել որևէ այլ բան, որ կարող էր ծառայել իբրև սենյակի զարդարանք:

Բայց աղջիկը ստեպ-ստեպ դադարում էր չրթել և իր վճիտ աչքերով ակնապիշ նայում էր դիմացի պատին, իրոք, ուղիղ նրա հայացքի դիմաց կեռիկից համեստորեն կախված էր փոքրիկ բրոնզե խաչելությունը, որի վրա աղոտ գծագրվում էր լայն բացված ձեռքերով խաչված Քրիստոսը: Ամեն անգամ, երբ աղջիկը նայում էր Հիսուսին, իր երկար թերթերունքների տակ թաքչող թախծի արտահայտությունը մի ակնթարթ անհետանում էր, և դրա փոխարեն նրա աչքերի մեջ բոցկլտում էր միամիտ հույսի շողը: Բայց աղջիկն անմիջապես փախցնում էր հայացքը, հոգոց հանում, հոգնած թոթվում սև մետաքսե զգեստի մեջ ամփոփված ուսերը և նորից սկսում եռանդով ձմերուկի կորիզ չրթել:

Աղջիկը Սուն Ցզին-հուան էր, 15-ամյա պոռնկուհին, որը ծայրը ծայրին հասցնելու համար այս սենյակում գիշերային հյուրեր էր ընդունում: Ցինվայի բազմաթիվ պոռնկուհիների մեջ Սունի նման արտաքին ունեցողներն, անշուշտ, շատ էին: Բայց խիստ կասկածելի էր, որ նրանց մեջ գտնվեր Սունի նման հեզ ևս մեկը: Նա, ի տարբերություն՝ ուրիշ ծախու կանանց, ստախոս ու գռեհիկ չէր, նա ուրախ ժպիտով զվարճացնում էր հյուրերին, որոնք ամեն գիշեր

այցելում էին նրա մռայլ սենյակը: Եվ եթե նրանց վարձատրությունը հազարից մեկ պայմանավորվածից ավելին էր լինում, նա ուրախանում էր, որ կկարողանա հորը՝ իր միակ հարազատին, հյուրասիրել նրա սիրած սակեի և՛ս մի բաժակով:

Ցզին-հուայի այսպիսի վարքագիծն, իհարկե, բացատրվում էր նրա բնավորությամբ, բայց կար նաև ուրիշ հանգամանք. Նա մանկուց կաթոլիկական հավատք էր ընդունել, այդպես էր նրան դաստիարակել հանգուցյալ մայրը, և պատից կախված խաչելությունը դրա վկայությունն էր:

Ի դեպ ասած, մի անգամ, հետաքրքրությունից դրդված, նրա մոտ գիշերեց երիտասարդ ճապոնացի մի զբոսաշրջիկ, որ եկել էր Շանհայի գարնանային ձիարշավը տեսնելու և միաժամանակ Հարավային Չինաստանի բնապատկերներով հիանալու համար: Եվրոպական կոստյումով, սիգարն ատամների արանքում, նա անփութորեն գրկեց իր գոգին նստած Ցզին-հուայի փոքրիկ մարմինը, և, պատահաբար նկատելով խաչելությունը, կոտրտված չինարենով անվստահ հարցրեց.

— Դու ի՞նչ է, քրիստոնեուհի՞ ես:

— Այո, ես մկրտվել եմ հինգ տարեկանում:

— Եվ այսպիսի արհեստո՞վ ես զբաղված:

Նրա ձայնի մեջ ծաղրանք կար, բայց Ցզին-հուան, իր սև՛ սաթե մազերով ծածկված գլուխը դրեց նրա ձեռքին և ժպտաց, ինչպես միշտ, բարի ժպիտով, որից մերկանում էին նրա մանրիկ, համաչափ ատամիկները:

— Ախր, եթե ես չզբաղվեի այս արհեստով, և՛ ես, և՛ հայրս սովից կմեռնեինք:

— Իսկ քո հայրը ծե՞ր է:

— Այո... Նա հազիվհազ է ոտքի վրա մնում:

— Բայց... Մի՞թե դու չես հասկանում, որ այս արհեստով՝ դու երկնքի չես արժանանա:

— Ոչ:-Թռուցիկ նայելով խաչելությանը՝ Ցզին-հուան մտախոհ արտաբերեց.-Ես կարծում եմ, որ Քրիստոսը երկնքում ինքն էլ, հավանաբար, գիտե, թե ինչ կա իմ սրտում: Այլապես տերը կլիներ Յաոցսյակաոյի բաժանմունքի ոստիկաններից մեկը:

Երիտասարդ ճապոնացին ժպտաց: Նա ձեռքերը կոստյումի գրպանները տարավ, հանեց մի զույգ նեֆրիտե ականջօղեր և ամրացրեց աղջկա ականջաբլթակներին:

— Այս ականջօղերը ես գնել էի, որ Ճապոնիայում նվեր տամ, բայց քեզ եմ նվիրում՝ ի հիշատակ այս գիշերվա:

Իսկապես էլ, այդ գիշերվանից Ցզին-հուան լի էր մի տեսակ խաղաղ վստահությամբ:

Բայց մեկ ամիս անց այդ թշվառն, ավաղ, հիվանդացավ. նրա մարմնի վրա հայտնվեցին չարորակ սիֆիլիսային խոցեր: Իմանալով այդ մասին՝ նրա գործընկերուհին խորհուրդ տվեց օպիումով օղի խմել, վստահեցնելով, որ դրանից ցավը մեղմանում է: Հետո մի ուրիշ ընկերուհի՝ Մաո Ին-չունը, պատրաստակամորեն նրան նվիրեց «գունլանվանի» և «ցզյալումիի» մնացորդներ, որոնցից ինքն էլ էր օգտագործել: Բայց չնայած Ցզին-հաուն ապրում էր մեկուսի, հյուրեր չէր ընդունում, առողջությունը ոչ մի կերպ չէր լավանում:

Եվ ահա մի անգամ Չեն Շան-չան, այցելելով Ցզին-հուային, լիակատար համոզվածությամբ նրան (հաստատ սնահավատության վրա հենված) բուժման մի եղանակ սովորեցրեց.

— Քանի որ քո հիվանդությունը քեզ է անցել հյուրերից, դու էլ այն պետք է մեկ ուրիշ վերադարձնես: Եվ այդ ժամանակ երկու-երեք օրից կառողջանաս:

Ցզին-հուան նստած էր՝ ձեռքն այտին հենած, և նրա դեմքի ճնշված արտահայտությունը չէր փոխվում: Բայց, ըստ երևույթին, Շան-չայի խոսքերը նրա մեջ հետաքրքրություն առաջացրեցին, և նա հարցրեց.

— Իրո՞ք:

— Դե, իհարկե, ճիշտ եմ ասում: Քույրս էլ ոչ մի կերպ չէր լավանում, ինչպես հիմա՝ դու: Բայց հենց հիվանդությունը փոխանցեց հյուրին՝ առողջացավ:

— Իսկ հյո՞ւրը:

— Հյուրի՞ն է խղճում: Ասում են՝ այդ հյուրը հիվանդությունից կուրացել է: Բայց մե՞զ ինչ:

Երբ Շան-չան հեռացավ, և Ցզին-հուան մենակ մնաց, ծնկի իջավ խաչելության առաջ և աչքերը հառելով խաչված Քրիստոսին՝ սկսեց ջերմեռանդորեն աղոթել.

— Տեր Հիսուս, որ երկնքում ես: Ես զբաղվում եմ այս ատելի արհեստով, որպեսզի կերակրեմ իմ հորը: Բայց իմ արածը խայտառակում է միայն ինձ, և ուրիշ ոչ ոքի ես վատություն չեմ անում: Դրա համար ես կարծում եմ, որ եթե մեռնեմ հենց այսպիսին, միևնույն է, ես կընկնեմ երկինք: Բայց հիմա ես կարող եմ շարունակել, եթե միայն իմ հիվանդությունը փոխանցեմ ուրիշի: Ուրեմն, թեկուզ ես ստիպված լինեմ սովամահ լինել (և այդ ժամանակ իմ հիվանդությունն էլ կանցնի), ես պետք է ոչ ոքի հետ անկողին չմտնեմ: Թե չէ ես իմ երջանկության համար կկործանեմ ուրիշի, որն ինձ ոչ մի վատություն չի արել: Բայց ես, վերջիվերջո, կին եմ: Ես կարող եմ ինչ-որ պահի տրվել գայթակղությանը: տեր Հիսուս, որ երկնքում ես: Խնդրում եմ, պահպանիր ինձ: Քեզանից բացի ես ոչ մի հույս չունեմ:

Ընդունելով այսպիսի որոշում՝ Ցզին-հուան, չնայած Շան-չայի և Ին-չուայի հորդորներին, այլևս հյուր չէր ընդունում, և եթե պատահում էր՝ իր հին ծանոթ տղամարդկանցից էին գալիս, Ցզին-հուան պարզապես նստում էր, ծխում, զրուցում՝ կատարելով նրանց և ոչ մի ցանկությունը:

— Ես սարսափելի հիվանդություն ունեմ: Եթե դուք պառկեք ինձ հետ՝ այն կկպչի նաև ձեզ,- ասում էր նա միշտ, երբ հարբած հյուրը փորձում էր բռնությամբ տիրել նրան: Նման դեպքերում նա չէր ամաչում նույնիսկ իր խոցոտ ամոթույքը ցույց տալ: Այդ պատճառով այցելությունները կամաց-կամաց դադարեցին: Եվ ապրելը օրեցօր դարձավ ավելի դժվար:

Այդ երեկո նա երկար նստեց՝ սեղանին թիկնած, ոչինչ չանելով և մտախոհ նայելով իր դիմաց: Հյուրերն առաջվա պես չէին այցելում նրան: Գիշերը մոտենում էր, ամեն ինչ լռել էր, և Ցզին-հուայի ականջներին էր հասնում միայն ծղրիդների երգեցողությունը: Իսկ քարե հատակով, չջեռուցվող սենյակում սաստկացող ցուրտը ջրի նման թափանցիկ նախ նրա մետաքսե կոշիկների, ապա դրանք նուրբ գրկած տոտիկների մեջ:

Ցզին-հուան որոշ ժամանակ նայում էր լամպի տամուկ լույսին, ապա ցնցվեց և թույլ հորանջեց: Գրեթե հենց այդ պահին ներկված դուռը թափով բացվեց, և ներս մտավ անծանոթ օտարերկրացի: Երևի այն բանից, որ դուռը թափով բացվեց, լամպի լույսը հանկարծ թրթռաց, բռնկվեց, և կիսամութ սենյակը լուսավորվեց տարօրինակ կարմիր լույսով: Ոտքից-գլուխ այդ կարմիրով լուսավորված հյուրը մի քայլ ետ գնաց և փակեց դուռը: Ցզին-հուան վեր կացավ և զարմացած նայեց անծանոթ օտարերկրացուն: Հյուրը կլիներ երեսունհինգ տարեկան: Նա արևավառ, մորուքավոր և խոշորաչյա տղամարդ էր՝ սրճագույն բծերով կոստյումով և նույնիսկ սև կեպիով: Միայն մի բան էր անհասկանալի, թեև նա, անտարակույս, օտարերկրացի էր, բայց, որքան էլ տարօրինակ է, նրա տեսքից անհնար էր որոշել՝ ասիացի՞ է արդյոք նա, թե՞ եվրոպացի: Կեպիի տակից դուրս պրծած սև մազերով, հանգած ծխամորճն ատամների արանքում, շեմքի մեջ կանգնած՝ նրան կարելի էր դնել մահու չափ հարբած անցորդի տեղ, որը սխալմամբ է այստեղ հայտնվել:

— Ձեզ ի՞նչ է հարկավոր,- գրեթե նախատինքով հարցրեց փոքր-ինչ վախեցած Ցզին-հուան՝ չհեռանալով սեղանի մոտից: Հյուրը թափահարեց գլուխը, ինչ-որ, ինչ-որ անհասկանալի բան

ասաց օտար լեզվով: Ի պատասխան՝ Ցզին-հուան գլուխը թափ տվեց, ինչից լամպի լույսի տակ առկայծեցին նրա նեֆրիտե ականջօղերը:

Տեսնելով, թե ինչպես է աղջիկը խոժոռել իր սիրուն հոնքերը՝ հյուրը հանկարծ բարձր քրքջաց, անբռնազբոսիկ շարժումով հանեց կեպին և օրորվելով ուղղվեց նրա մոտ: Թուլացած նստեց դիմացի աթոռին: Այդ պահին Ցզին-հուային հանկարծ նա թվաց այնքան հարազատ ու մտերիմ, կարծես վաղուց ճանաչել է նրան, ուղղակի չի հիշում՝ որտեղ և երբ: Հյուրն առանց ձևականությունների մատները խրեց սկուտեղի ձմերուկի կորիզների մեջ, բայց չչրթեց, այլ սկսեց ուշադիր նայել Ցզին-հուային, ձեռքի տարօրինակ շարժումներով և իր օտար լեզվով փորձելով ինչ-որ բան հասկացնել: Ցզին-հուան չհասկացավ նրա բառերի իմաստը, բայց աղոտ կռահեց, որ հյուրը գիտե, թե ինչով է զբաղվում ինքը: Չինարեն չհասկացող օտարերկրացիների հետ երկար գիշերներ անցկացնելը Ցզին-հուայի համար սովորական բան էր: Այդ պատճառով նա նորից նստեց և իր սովորույթի համաձայն բարեհոգի ժպտալով սկսեց շատախոսել՝ իր խոսքը համեմելով հյուրին բոլորովին անհասկանալի կատակներով: Բայց հյուրը ամեն երրորդ բառի վրա այնպես էր հռհռում, կարծես իրոք հասկանում էր, և ձեռքերն ավելի եռանդուն էին «խոսում»: Հյուրից օղու հոտ էր փչում, բայց նրա հարբած կարմիր երեսը առնացի կենսական ուժից այնպես էր փայլփլում, որ լուսավորվում էր ողջ խղճուկ սենյակը: Համենայնդեպս, Ցզին-հուայի աչքին մինչ այդ իր տեսած բոլոր օտարերկրացիների մեջ ամենագեղեցիկն էր՝ չխոսելով այլև Նանկինի իր ծանոթների մասին: Այսպես թե այնպես, բայց նա չէր կարողանում չմտածել, թե նախկինում հանդիպել է այդ տղամարդուն: Նայելով ճակատին թափված նրա սև գանգուրներին և անընդհատ զվարթ ժպտալով՝ Ցզին-հուան ջանում էր հիշել, թե որտեղ է այդ դեմքը տեսել:

«Արդյո՞ք նա չէ, որ իր գեր կնոջ հետ գետանավով էր եկել: Բայց՝ ոչ, նա շատ ավելի շիկահեր էր: Իսկ գուցե նա՞ է, որ լուսանկարեց Ցինվայում Կուն-Ցզիի դամբարանը: Բայց նա, կարծես թե, ավելի տարիքով էր: Այո, այո մի անգամ ես տեսել եմ. Լիդացյաոյում, կամրջի մոտ, հենց ռեստորանի դիմաց, ամբոխ էր հավաքված, և մեկը իսկևիսկ այս մարդու նման, հաստ մահակով խփում էր ռիկշայի մեջքին: Բայց... նրա աչքերը ոնց որ ավելի կապույտ էին»:

Մինչ Ցզին-հուան մտածմունքների մեջ էր՝ անծանոթը նույն զվարթությամբ լցրեց ծխամորճը, ծխեց, և սենյակը լցվեց անուշաբույր ծխով: Հետո հանկարծ նա ինչ-որ բան ասաց, ծիծաղեց, այս անգամ կամացուկ, և, բարձրացնելով երկու մատները, մոտեցրեց Ցզին-հուայի աչքերին, հասկացնելով «երկու» թիվը, որն, իհարկե, նշանակում էր երկու դոլար: Բայց Ցզին-հուան, որն այլևս հյուր չէր ընդունում, առաջվա պես ճարպկորեն չրթում էր և ի նշան մերժումի՝ երկու անգամ գլուխը տարուբերեց: Այդժամ հյուրը, փռվելով սեղանին, երեսը մոտեցրեց Ցզին-հուայի երեսին և արուի աներկմիտ հայացքով նրա աչքերի մեջ նայելով՝ բարձրացրեց երեք մատները:

Ցզին-հուան, բերանում դեռ ձմերուկի կորիզները, փոքր-ինչ ետ քաշվեց, և նրա դեմքը վրդովմունք էր ցույց տալիս: Հյուրն, ըստ երևույթին, կարծեց, թե նա երկու դոլարով չի համաձայնվում: Մինչդեռ բոլորովին հնարավոր չէր նրան բացատրել, թե բանն ինչն է, քանի որ նա չինարեն չէր հասկանում: Դառնորեն զղջալով իր թեթևամտության համար՝ Ցզին-հուան իր սառն աչքերը մի կողմ թեքեց և կամա-ակամա տարուբերեց գլուխը:

Բայց անծանոթը թեթևակի ժպտաց և կարծես մի քիչ տատանվելով՝ չորս մատները բարձրացրեց և կրկին օտար լեզվով ինչ-որ բան ասաց: Վերջապես համբերահատ եղած Ցզին-հուան դեմքն այտին հենեց՝ չկարողանալով նույնիսկ ժպտալ, բայց հենց այդ ժամանակ որոշեց, որ իրեն մնում է գլխով «ոչ» ասել այնքան ժամանակ, մինչև դա հյուրին հոգնեցնի: Բայց հենց այդ պահին հյուրի ձեռքի բոլոր հինգ մատները վեր բարձրացան:

Հետո երկար ժամանակ նրանք շարունակում էին զրուցել ձեռքերի շարժումների և դիմախաղի միջոցով: Մատ առ մատ համառորեն բարձրացնելով առաջարկվող գինը՝ հյուրն ի վերջո ցույց տվեց, որ ինքը չի խնայի նույնիսկ տասը դոլարը՝ պոռնկուհու համար պատկառելի գումար, չտատանեց Ցզին-հուային: Աթոռից վեր կենալով՝ նա հենվեց սեղանի

կողքին, և երբ հյուրը շռայլորեն իր երկու ձեռքերի բոլոր մատները, զայրացած ոտքը խփեց գետնին և իրար ետևից գլուխը տարուբերեց: Եվ հենց այդ պահին խաչելությունը, չգիտես ինչու, պոկվեց կեռիկից և թեթև զնգոցով ընկավ քարե հատակին, Ցզին-հուայի ոտքերի մոտ:

Նա ձեռքն իսկույն մեկնեց և խաչելությունը խնամքով բարձրացրեց: Պատահաբար նրա աչքն ընկավ խաչված Քրիստոսի դեմքին, և, տարօրինակ բան՝ այդ դեմքը կարծես իր սեղանի մոտ նստած օտարերկրացու իսկական արտացոլումը լիներ:

«Ահա թե ինչու էր ինձ անընդհատ թվում, թե ես նրան նախկինում տեսել եմ, ախր, սա հենց տեր Քրիստոսի դեմքն է»:

Բրոնզե խաչելությունը կրծքին սեղմած՝ Ցզին-հուան ցնցված նայում էր հյուրին: Հյուրը, ում դեմքը գինուց կարմրատակել էր և առաջվա պես լամպի լույսով լուսավորված էր, ժամանակ առ ժամանակ ծխամորճը բերանին էր մոտեցնում և բազմանշանակ ժպտում: Եվ նրա աչքերը չէին կտրվում Ցզին-հուայից, վերուվարելով նրա փոքրիկ մարմնով մեկ, ճերմակ պարանոցով և ականջներով, որոնց վրա փայլում էին նեֆրիտե ականջօղերը: Բայց Ցզին-հուային թվում էր, թե նույնիսկ այդ վիճակում հյուրը մի տեսակ վեհություն է ճառագում:

Մի քիչ սպասելով՝ հյուրը ծխամորճը բերանից հանեց և գլուխը բազմանշանակ խոնհարելով՝ ծիծաղաձայն ինչ-որ բան ասաց:

Այդ խոսքերը Ցզին-հուայի վրա հմուտ հմայողի շշունջ ազդեցություն ունեցան: Արդյո՞ք նա չէր մոռացել իր մեծահոգի որոշման մասին: Խոնհարելով ժպտացող աչքերը և բրոնզե խաչելությունը կրծքին սեղմած՝ նա ամոթխած մոտեցավ խորհրդավոր հյուրին:

Հյուրը տաբատի գրպանի մեջ արծաթե դրամները հաշվեց, որոշ ժամանակ հիացավ առաջվա պես աչքերով ժպտացող Ցզին-հուայով, բայց հանկարծ նրա աչքերի մեջ կրակ բռնկվեց, նա վեր թռավ տեղից և ամուր գրկելով Ցզին-հուային՝ նրան սեղմեց օդեհոտ իր գրկում: Ցզին-հուան, ասես գիտակցությունը կորցրած, գլուխը ետ գցած, գունատ այտերը՝ հանկարծ շառագունած, հմայված նայում էր հյուրի աչքերին: Հասկանալի էր՝ նա այլևս չէր կարող կշռադատել՝ տրվե՞լ տարօրինակ օտարերկրացուն, թե՞ խույս տալ նրա համբույրներից՝ նրան չվարակելու մտավախությամբ: Իր շրթունքները հանձնելով մազումորուքի մեջ կորած նրա բերանին՝ Ցզին-հուան գիտեր միայն մի բան. Նրա կուրծքը ափեափ լցված էր առաջին սիրո հայտնության բերկրանքով:

Մի քանի ժամ անց արդեն մարած լամպով սենյակում հազիվ լսելի էր ծղրիդների ձայնը, որն աշնանային թախիծ էր խառնում երկու քնածների երազային շնչառությանը: Եվ Ցզին-հուայի երազը, պոկվելով մահճակալի փոշոտ առագաստից, բարձրացավ վեր, վեր, դեպի աստղաշատ և լուսնապսակ գիշերը:

...Ցզին-հուան նստած էր կարմիր սանդալենուց պատրաստված աթոռին և սեղանիկին դրված զանազան ուտեստներն էր ճաշակում զույգ ձողիկներով: Ծիծեռնակի բույն, շնաձկան լողակ, խաշած ձվեր, ձկնապուխտ, տապակած խոզ, ձկնապուր... Անհաշիվ ուտելիքներ: Իսկ սպասքը կազմում էին երկնագույն լոտոսներով և ոսկեփայլ փյունիկներով ջրաներկված գեղեցիկ ափսեներ ու պնակներ: Նրա թիկունքում շղարշե վարագույրը ծածկում էր պատուհանը, որից անդին, ըստ երևույթին, գետ էր հոսում. Սենյակում լսելի էր գետի անընդհատ քչքչոցը և ուրախ ճողփանքի ձայնը: Ցզին-հուային թվում էր, թե նա գտնվում է մանկուց իրեն հարազատ Ցզինվայում: Բայց նա, անտարակույս, երկնքում էր, Քրիստոսի հարկի տակ:

Ստեպ-ստեպ Ցզին-հուան վայր էր դնում ձողիկները և դիտում էր շուրջը: Բայց ընդարձակ սենյակում միայն վիշապազարդ սյուներ էին, կերակուրներից ելնող գոլորշով պատված խոշոր քրիզանթեմներով ծաղկամանները, և ուրիշ ոչ մի շունչ:

Եվ սակայն, բավական էր՝ ափսեն դատարկվեր, Ցզին-հուայի աչքի առաջ, չգիտես որտեղից, հայտնվում էր տաք բուրմունք արձակող մի նոր ուտելիք: Եվ հանկարծ տապակած կաքավը,

որին նա դեռ չէր էլ հասցրել դիպչել, թևերը թափահարեց և շուռ տալով գինու սափորը՝ հասավ առաստաղին:

Այդ ժամանակ Ցզին-հուան զգաց, որ ինչ-որ մեկը թիկունքից լռիկ մոտեցել է իր աթոռին: Այդ պատճառով, վայր չդնելով ձողիկները, նա արագ ետ շրջվեց: Այնտեղ, որտեղ ըստ նրա, պետք է պատուհան լիներ, պատուհանի փոխարեն փայտից պատրաստված մետաքսապատ աթոռին վեհորեն նստած էր անծանոթ օտարերկրացին, ատամների արանքում՝ ղեյլանի երկար բրոնզե ծխամորճ: Ցզին-հուան անմիջապես ճանաչեց այս գիշեր իրեն հյուր եկած օտարերկրացուն: Միայն թե հիմա նրա գլխավերևում, մեկ ապակու հեռավորության վրա, նշմարվում էր նուրբ լուսապսակ, որ երեք օրական լուսին էր հիշեցնում:

Հենց այդ պահին, կարծես սեղանի վրայից դուրս պրծնելով, մեծ ափսեի մեջ հայտնվեց ախորժաբեր ուտելիք: Նա իսկույն մեկնեց ձողիկները և ուզում էր համեղ պատառ վերցնել, բայց հանկարծ հիշեց ետևում նստած օտարերկրացուն և ուսի վրայով նայելով՝ ամոթխած հարցրեց.

— Դուք սեղանին չե՞ք մոտենա արդյոք:

— Ոչ, մենակ կեր: Եթե դու հիմա ուտես, քո հիվանդությունն այս գիշեր կչքանա:

Լուսապսակով օտարերկրացին այդ բառերը ասելիս ծխամորճը բերանից չէր հանել և ժպտում էր մի ժպիտով, որ լի էր անսահման սիրով:

— Ուրեմն՝ դուք չե՞ք կամենում ուտել:

— Ե՞ս: Ես չեմ սիրում չինական խոհանոց: Դու դեռ ինձ չե՞ս ճանաչել: Հիսուս Քրիստոսը երբեք չինական կերակուր չի կերել:

Այս բառերից հետո նանկինյան Քրիստոսը դանդաղ վեր կացավ աթոռից և, մոտենալով թիկունքից, քնքշորեն համբուրեց ապշահար Ցզին-հուայի այտը:

Ցզին-հուան դրախտային քնից արթնացավ, երբ սենյակն արդեն լցվում էր աշնանային պաղ այգաբացի լույսերով: Բայց մահճակալի փոշոտ, նավակաձև առագաստի տակ դեռ տաք կիսախավար էր: Այդ կիսամթի մեջ աղոտ ուրվագծվում էր մինչև բերանը հին, գունաթափ բրդե ծածկոցով փաթաթված Ցզին-հուայի դեմքը, և նա աչքերը դեռ բաց չէր արել: Հավանաբար գիշերային քրտինքից նրա յուղած մազերը կպել էին իրար և թափվել երեսին, իսկ կիսաբաց շրթունքների արանքից, ինչպես բրնձահատիկներ, սպիտակին էին տալիս մանր ատամիկները:

Թեև Ցզին-հուան արթնացել էր, բայց նրա հոգին դեռ թափառում էր երազի դրվագներում՝ շքեղ քրիզանթեմների, տապակած կաքավների, Հիսուս Քրիստոսի պատկերներով... Սակայն առագաստի տակ ավելի ու ավելի շատ էր արևի լույս ընկնում՝ նրա երանելի անուրջներն ընդհատելով բիրտ իրականության հստակ գիտակցությամբ, այն բանի գիտակցությամբ, որ երեկ շաքար եղեգե այս մահճակալի վրա նա պառկել է խորհրդավոր անծանոթի հետ: «Բա որ հիվանդությունը կպչի նրա՞ն...»՝ այս մտքից Ցզին-հուան իրեն ահավոր վատ էր զգում, և նրան թվում էր, թե նա այս առավոտ ի զորու չի լինի նայել տղամարդու դեմքին: Բայց հանկարծ անհաղթահարելի ցանկություն ունեցավ տեսնել նրան. Գոնե մի անգամ էլ նրա արևավառ, սիրելի դեմքին չնայելը շատ ծանր կլիներ Ցզին-հուայի համար: Փոքր-ինչ տատանվելով՝ նա զգուշորեն բացեց աչքերը և նայեց մահճակալին: Սակայն, ի զարմանս իրեն, և՛ մահճում, և՛ ընդհանրապես սենյակում, ծածկոցով փաթաթված Ցզին-հուայից բացի՝ մարդ չկար՝ ո՛չ Քրիստոսի նման անծանոթը, ո՛չ էլ ուրիշ որևէ մեկը:

«Ուրեմն՝ դա էլ եմ երազում տեսել»...

Ցզին-հուան վրայից գցեց կեղտոտ ծածկոցը և վեր կացավ: Հետո զույգ ձեռքերով տրորելով աչքերը, ետ տարավ ծանր առագաստը և դեռ քնատ աչքերով սենյակը զննեց:

Պաղ առավոտը սենյակի բոլոր իրերն անողոք լույսի տակ էր ցույց տալիս: Հին սեղանը, մարած լամպը, աթոռները (մեկը շուռ էր տված հատակին, մյուսը շրջված էր դեպի պատը), ամեն ինչ այնպես էր, ինչպես նախորդ երեկոյան: Իսկ սեղանին, ձմերուկի չրթած կորիզների մեջ, աղոտ փայլում էր փոքրիկ խաչելությունը: Թարթելով լույսից շլացող փայլերը և տնտղելով սենյակը, Ցզին-հուան միաժամանակ անշարժ նստեց դեռ չհարդարված մահճին:

— Ոչ, երեկվանը երազ չէր...-շշնջաց՝ մտածելով անծանոթի անհասկանալի անհետացման մասին: Իհարկե, կարելի էր մտածել, որ նա սուսուփուս դուրս է եկել, մինչ աղջիկը քնած է եղել: Բայց Ցզին-հուան չէր հավատում, որ գիշերն իրեն այդքան ջերմորեն գուրգուրող տղամարդը կհեռանար՝ առանց հրաժեշտի մի բառ ասելու: Ավելի ճիշտ՝ նրա համար շատ ծանր էր հավատալ, որ հենց այդպես էլ եղել է: Բացի այդ, Ցզին-հուան մոռացել էր խորհրդավոր օտարերկրացուց ստանալ խոստացած տասը դոլարը:

«Մի՞թե նա իրոք գնացել է»:

Դառնացած սրտով նա ուզում էր հագնել ծածկոցին գցված մետաքսե սև զգեստը, երբ հանկարծ նրա մեկնած ձեռքը քարացավ, իսկ երեսն ասես վառվեց: Արդյո՞ք նրա ներկած դռան ետևում խորհրդավոր օտարերկրացու քայլերի ձա՞յնը որսաց, թե՞ բարձն ու ծածկոցը ողողած օդեհոտը գիշերային հուշն արթնացրեց: Ոչ հենց այդ ակնթարթին Ցզին-հուան զգաց, որ հրաշք է եղել, և իր մարմնի վրա չարորակ սիֆիլիսային խոցերը մի գիշերվա մեջ իսպառ ու անհետ չքացել են, ասես չեն էլ եղել:

«Ուրեմն՝ իրոք Քրիստոսն էր»: Միտակ շապկով թռչելով անկողնուց, ինքնամոռաց, ծնկելով քարե սառը հատակին, ինչպես համբարձված Տիրոջ հետ զրուցող չքնաղ Մարիա Մագթաղինացին, ջերմորեն աղոթեց խաչելության առաջ:

Արդեն հաջորդ տարի, գարնանային մի երեկո, ճապոնացի այն երիտասարդ զբոսաշրջիկը, որ մի անգամ արդեն գիշերել էր Ցզին-հուայի մոտ, նորից նստած էր նրա դիմաց, լամպի լույսի տակ, սեղանի մոտ:

— Իսկ խաչելությունը դեռ պատի՞ն է,— փոքր-ինչ ծաղրական երանգով նկատեց նա, և այդ ժամանակ Ցզին-հուան, անմիջապես լրջանալով, նրան պատմեց զարմանահրաշ այս պատմությունը, թե ինչպես է մի անգամ Քրիստոսը գիշերով Նանկին եկել և իրեն բուժել սարսափելի հիվանդությունից:

Լսելով աղջկան՝ երիտասարդ ճապոնացի զբոսաշրջիկն իր մեջ ահա թե ինչ մտածեց.

«Ես ճանաչում եմ այդ օտարերկրացուն: Ճապոնա-ամերիկյան խառնածին է, անունը, կարծեմ, Ջորջ Մերրի է: Նա պարծեցել էր Ռոյթեր գործակալության իմ ծանոթ թղթակցի մոտ, թե մի անգամ Նանկինում գիշերն անց է կացրել մի մատղաշ պոռնկուհու հետ, քրիստոնեուհու, և երբ վերջինս դեռ քաղցր քնած է եղել՝ սուսուփուս ճողոպրել է: Երբ ես վերջին անգամ Նանկինում էի, իջևանել էի հենց այս հյուրանոցում, որտեղ և նա, այնպես որ, նրան առա այսօր դեմքով հիշում եմ: Նա ներկայացավ որպես անգլիական ինչ-որ թերթի լրագրող, բայց իրականում շատ անպիտան և վատ մարդ էր: Հետո նա սիֆիլիսի հողի վրա խելագարվեց... Ստացվում է, որ նա այս կնոջից է վարակվել: Եվ այս կինը մինչև հիմա այդ սրիկային Քրիստոսի տեղն է դնում: Ասե՞մ նրան ճշմարտությունը, թե՞ լռեմ, որպեսզի նա ցմահ մնա իր երազի մեջ, որ Արևմուտքի հնագույն ավանդազրույց է հիշեցնում...»:

Երբ Ցզին-հուան ավարտեց իր պատմությունը, ճապոնացին լուցկով վառեց և ծխեց իր բուրավետ սիգարը: Եվ դիտմամբ ընդունելով այնպիսի տեսք, կարծես իրեն շատ հետաքրքրում է աղջկա պատմածը՝ մի կերպ հարցրեց.

— Ահա թե ինչ... Տարօրինակ է: Եվ դու դրանից հետո էլ ոչ մի անգամ չե՞ս հիվանդացել:

— Ոչ, ոչ միա անգամ,- առանց տատանվելու և պարզերես պատասխանեց Ցզին-հուան՝ շարունակելով ձմերուկի կորիզ չրթել: